Վարկատուի լոգո (սեղմել և բեռնել)

# ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ (ՕՎԵՐԴՐԱՖՏԻ) ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

*Գործողության սկիզբ* 13/07/2017 *Ավարտ* չի սահմանվում

Հարգելի՛ վարկառու, բոլոր վարկատուները **պարտավոր են տրամադրել նմանատիպ թերթիկ**, որում ամփոփված են սպառողական վարկի էական պայմանները: Վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները, որոնք չպետք է լինեն ավելի խիստ, քան սույն ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՈՒՄ նշվածները:

## 1.

| | |
|---|---|
| **Վարկատուի անվանումը** | «Անելիք բանկ» ՓԲԸ |
| **Գտնվելու վայր** | 0010, ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13 |
| **Հեռ.** | +374 10 593333 |
| **Էլ.փոստ** | anelik@anelik.am |

## 2. ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| **2.1 Վարկի անվանում** | «Պրեմիում» վարկային գիծ |
| **2.2 Վարկի գումար** | 150 000-6 000 000 |
| **2.3 Վարկի ժամկետ** | 12-24 *ամիս* |
| **2.4 Տարեկան անվանական % (ՏԱՏ)** | 16.50-22.50 |

*Այն տոկոսադրույքն է, որի հիման վրա հաշվարկվում են վարկի տոկոսագումարները:*

| | |
|---|---|
| **2.5 Տարեկան փաստացի % (ՏՓՏ)** | 18.87-32.02 |

*Այն տոկոսադրույքն է, որում, բացի վարկի տոկոսագումարներից, հաշվի են առնված վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները: Վարկային պայմանագրի կնքման դեպքում Ձեր վարկի ՏՓՏ-ն չի կարող լինել ավելին, քան այս թերթիկում ներկայացված ՏՓՏ-ն:*

## 3. ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| ☐ **3.1 Գրավ** | չի պահանջվում |
| ☐ **3.2 Երաշխավորություն** | չի պահանջվում |

## 4. ՎԱՐԿԻ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| **4.1 Վարկ/գրավ հարաբերակցություն** | չի սահմանվում % |
| **4.2 Արտոնյալ ժամկետ** *(Գրեյս պերիոդ)* | տվյալ ամսում անկանխիկ կատարված գործարքների համար մինչև հաջորդ ամսվա 15-ը |
| **4.3 Հաշվի նվազագույն շարժ և վճարման կարգ** | յուր.ամսվա 1-ի դր. օգտ.գումարի 10%-ի և կուտ.%-ի չափով, մայր գումարը ժամկետի վերջում |
| **4.4 Չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող %** | 0 % |

## 5. ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

| | |
|---|---|
| **5.1 Վարկային հայտի ուսումնասիրության** | 0 - 2 000 ՀՀ դրամ |
| **5.2 Վարկի սպասարկման** | չի սահմանվում |
| **5.3 Գրավի գնահատման** | չի սահմանվում |
| **5.4 Նոտարական վավերացման** | չի սահմանվում |
| **5.5 Գրավի ապահովագրության** | չի սահմանվում |
| **5.6 Քարտի սպասարկման** | 2 000- 5 000 ՀՀ դրամ |
| **5.7 Կանխիկացման** *(վարկատուի բանկոմատներից կանխիկացման)* | 0.5% |
| **5.8 Այլ միջնորդավճարներ** | չեն սահմանվում |

| | |
|---|---|
| **5.9 Ընդամենը այլ վճարներ** | 4 750-37 000 ՀՀ դրամ |

*Բոլոր այլ վճարների ընդհանուր գումար*

## *6. ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ*

***Դուք իրավունք ունեք վարկատուի հետ հաղորդակցվել Ձեր նախընտրած եղանակով՝ առձեռն, էլեկտրոնային կամ փոստային կապի միջոցով (օրինակ՝ Դուք կարող եք Ձեր քաղվածքը ստանալ Ձեր էլեկտրոնային փոստի միջոցով):***

***Դուք իրավունք ունեք ցանկացած չափով ժամկետից շուտ մարել վարկը՝ առանց տույժեր կամ տուգանքներ վճարելու:***

## *7. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ*

***ՏՈՒՅԺ/ՏՈՒԳԱՆՔՆԵՐ***

| | |
|---|---|
| **7.1 Վարկի մայր գումարը չվճարելու դեպքում** | 0.2% օրական, 1 և ավելի օր ուշացնելու դեպքում |
| **7.2 Տոկոսագումարները չվճարելու դեպքում** | 0.5% օրական, 1 և ավելի օր ուշացնելու դեպքում |
| **7.3 Այլ վճարներ** | չի սահմանվում |

7.4 Ձեր գրավի առարկայի վրա օրենքով սահմանված կարգով կարող էկարող է **բռնագանձում** տարածվել:

7.5 Այն դեպքում, երբ գրավի իրացումից հնարավոր չէ բավարար գումար ստանալ, ապա Ձեր այլ անձնական գույքը կարող է օգտագործվել վարկի մարման համար:

7.6 Ձեր մասին տեղեկատվությունը օրենքով սահմանված կարգով կարող է գրանցվել **Վարկային բյուրոյում:** Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

## *8. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ*

| | | | |
|---|---|---|---|
| ◉ | Անձը հաստատող փաստաթուղթ | ○ | |
| ◉ | Սոց.քարտ/ՀԾՀ/նույն.քարտ/ՀԾՀ չունենալու վ-յալ տեղեկանք | ○ | |
| ◉ | Վարկառուի աշխատավարձի վերաբերյալ տեղեկանք | ○ | |
| ◉ | աշխատավարձը Բանկ տեղափոխելու պարագայում՝ հայտար | ○ | |

## *9. ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏ*

| | | |
|---|---|---|
| **Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետ** | 2 | *օր* |
| **Վարկային հայտի (դիմումի) վերաբերյալ որոշման մասին տեղեկացնելու ժամկետ** | 1 | *օր* |

**Վարկը տրամադրելու ժամկետ** վարկ.պայմ-ի ստոր. *օր* *(Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո:)*

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

### ԵՐԲ ՀԱՆԴԵՍ ԵՔ ԳԱԼԻՍ ՈՐՊԵՍ ԵՐԱՇԽԱՎՈՐ, ԱՊԱ՝

**ԴՈՒՔ ԵՎՍ ԿՐՈՒՄ ԵՔ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,**
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա վարկի չմարված մասի պարտավորությունները տարածվում են Ձեզ վրա:

**ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՍՏԱՆԱԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻՑ ՎԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ**
այսինքն՝ Դուք կարող եք վարկառուից պահանջել հատուցել վարկատուին վճարած գումարի տոկոսներն ու վարկառուի փոխարեն պատասխանատվությունը կրելու կապակցությամբ կրած այլ վնասները:

**ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՁԵԶ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
այսինքն՝ երբ վարկառուն չի կատարում կամ թերի է կատարում իր պարտավորությունը, ապա Դուք պարտավոր եք վարկատուի կողմից այդ մասին նախազգուշացվելուց հետո երաշխավորության պայմանագրով սահմանված ժամկետում մարել վարկի չմարված պարտավորությունը:

**ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՅՏՆՎԵԼ «ՎԱՏ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ»**
այսինքն՝ վարկառուի կողմից վարկի չմարման դեպքում Դուք կարող եք գրանցվել Վարկային բյուրոյում, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դա կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:



**Ի՞ՆՉ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:**
Վարկային պատմությունը Ձեր ֆինանսական պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է, որը հավաքվում, կուտակվում և պարբերաբար նորացվում է ինչպես Ձեզ վարկ տրամադրած առանձին վարկատուների, այնպես էլ Վարկային բյուրոյի կողմից:

**Դուք իրավունք ունեք տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը ԱՔՌԱ վարկային բյուրոյից՝** այցելելով Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 9-րդ հարկ:

Վարկային պատմության մասին ավելի մանրամասն կարող եք իմանալ www.acra.am կայքից:

»